

կաթողիկոս գրած թղթին մէջ: Սիմէոն կը գրէ. «Դուք ընդէ՞ր զԱղուանից տունն յափըշտակեցիք, զոր ի ձեր թուղթն գրեալ էիք, թէ ինքն(ա)գլուխ աթոռ է ի սուրբ Լուսաւորչէն կարգեալ: Նոյնպէս եւ զԱղթամարայն ընդ ձեր իշխանութեամբ նուաճեցիք, որ ԵՃԻԶ (526) տարի է, որ ինքնագլուխ կաթողիկոսք են. թէպէտ զիրք կու պարսաւեն: Տե՛ս, ե՞ս եղպ յարող տուն առ տուն, թէ դու՛ ուտելով դատենս այրեաց, . . . »¹:

Աղուանք: Կը տեսնուի Սիմէոն կաթողիկոսի վերոյիշեալ տողերէն, թէ Մովսէս նաեւ Աղուանից հետ մշակած է բարեկամական յարարերութիւններ, որոնց պտուղն քաղեց ապա Փիլիպպոս կաթողիկոս²:

Սիւ: Պէտք է ենթադրել թէ Մովսէս կաթողիկոս նաեւ Սոյ Աթոռին հանդէպ սիրով աղբած ըլլայ: Այս մասին կը պակսի մեզի ժամանակակից աղբիւր: Ուշադրութեան արժանի է այս տեսակէտով Գրիգոր Դարանաղցոյ հետեւեալ տեղիքը (էջ 335), ուր կ'ըսուի թէ Սոյ Մինաս կաթողիկոս († 1632) «կամեցաւ զնալ յէջմիածին ուխտի պատճառաւ եւ տեսանել զկաթողիկոսն Մօսէս՝ զերկրորդ լուսաւորիչն արեւելեան եւ զամենայն անպատաւոր միանձունս, վասն զի սիրող էր այնպիսի վարուց եւ կարգաւորութեանց, եւ

¹ Արարատ, 1904, էջ 381. Հմմտ. իմ Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 29:

² Հմմտ. Ջամբո, 79: